

2023թ

Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
12-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Հայոց արքան մի դուստր ուներ նազելաճեմ ու գեղաչվի: Հայրը անսահման սիրում էր դստերը և մշտապես ու անընդմեջ ի կատար էին ածվում աղջկա անգամ խելահեղության հասնող քմահաճույքը: Երբ աղջիկը դառավ ծաղկահասակ օրիորդ ամուսին ընտրեց ումն օտար իշխանի մերժելով իրեն ձեռքը խնդրող քաջագուն հայորդիներին:

Չխրախուսելով դստեր ընտրությանը հայրը այնուամենայնիվ չասաց որ դեմ է այդ միությանը ավելին աղջկան նվիրեց թանկարժեք օժիտ այդ թվում յոթը հայկական գյուղ:

Կարճ ժամանակ անց մի քանի ամիս հետո գեղեցկատես դշխոն ցավոք ծանր հիվանդացավ և համայն աշխարհի ծագերից եկած բժշիկները նույնիսկ ի վիճակի չէղան փրկելու աղջկա կյանքը: Նենգ օտարականը մտածեց կնոջ մահը հարմար առիթ է որ իրականացնի իր վաղեմի նկրտումները: Նա հայոց շեներից օր օրի արտաքսելով հայերին հափշտակեց նրանց ունեցվածքը թե ջրարբի խոտհարքերը թե բերքառատ այգիները և թե ամբողջ դաշտերը ու բնակեցրեց այնտեղ իր ազգակիցներով:

Տեսնելով ստորաբարո փեսայի արարքը արքան հրամայեց նրան անհապաղ հեռանալու հայոց հողերից: Սակայն այդ ապերախտը չարախնդորեն մատնացույց արեց արքայի կնքված ընծայագիրը: Այդժամ արքունական հեծելազորը բռնի արտաքսեց օտարականին: Իսկ իր դառը փորձից ելնելով արքան հետնորդներին կտակեց խորախորհուրդ ու իմաստնալից այս խրատը Հողն օժիտ չեն տալիս :

1. Տեքստի ոճին համապատասխան՝ կտակի՛ր քո խրատը հետագա սերունդներին մեկ նախադասությամբ:
(1 միավոր)
2. Բնագրից առանձնացրո՛ւ թույլ տրված լեզվական սխալները՝ դիմաց գրելով ճիշտը:
(4 միավոր)
3. Կետադրի՛ր համր բնագիրը:
(3 միավոր)
4. Տեքստից դուրս գրի՛ր բարդաձանցավոր 10 բառ: Ընդգծի՛ր ածանցները:
(2միավոր)
5. Բնագրից դուրս գրի՛ր անկանոն և պակասավոր բայերը: Գրի՛ր նրանց սկզբնաձևերը:
(1 միավոր)
6. Գրի՛ր **ներհուն, տուղտ, տարփածու, սկիհ, նշավակել, տնապան, անդրի, հոլանի, պայազատ, սակավապետ, ճամարտակել** բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ:
(2 միավոր)
7. Մեկնաբանի՛ր **ավելի լավ է առյուծի պոչ լինել, քան ոչխարի գլուխ, լավագույնը լավի թշնամին է** թևավոր խոսքերը:
(1 միավոր)
8. Գրի՛ր նամակ սփյուռքում ապրող քո հասակակցին (երկու էջի սահմաններում):
(6 միավոր)